համ սեխ, և ամենայն ինչ. գնում են դէպի հիւսիս Ռուսաստան, և այն տեղից բերում են զանազան ապրանք ռուսի, արծաթեայ և ոսկեայ անօթք եւայլն. գնում են դէպի հարաւ — Պարսկաստան, և այն տեղից բերում են լիմոն, նարինջ, թուրինջ, ձիթապտուղ, մրգեղէն են։

Բագուի մէջ իրրեւ հնութիւն և նշանաւոր առաւելկայն է հին խանների պալատը ամուր և բարձր պարսպապատ, հարաւային որման վրայ ունելով քիւֆի գրով արձանագրութիւն, որի մէջ կանգուն կայ բարձր աշտարակն (մինարա), որ ռուսաց տիրապետութեան ժամանակից պիտոյանում է նաւավարաց իրրեւ փարոս լուսատու։ Բագուն երբեմն ց1850—1860 թուականներն համարւում էր Շամախւոյ աքսորանոցն, և ինչպէս ասում են շամախեցիք, մեր սիբիրն էր, ուր աքսորում էին յանցաւորներին։ 1860 - 70 թուերից սկսած Բագուն եղել է մի գեղեցիկ զարդարուն բարեկարգ քաղաք։ Բագու նախ քան շէնանալն ու բազմամարդանալն ունէր 50 տուն հայ և քանի հարիւր տուն թուրք բնակիչ, որք պարապում էին ձկնորսութեամբ և առեւտրով. իսկ շրջակայ գիւղացի թուրքերը պարապում էին այգեգործութեամբ և պարտիզպանութեամբ, որք և մշակում — պատրաստում էին ընտիր քրքում (զաֆրան) և պատուական սեխ ու ձմերուկ. իսկ այժմ հայք են 2178 ընտանեստէր տունք և քանի հազար եւս անտուն — անտեղ կրպակարնակ հայք, և բոլորը պարապում են վաճառականութեամբ, արհեստով, և ծառայութեամբ նաւային ու նաւթային գործոց և գործարանաց մէջ, և ուրիշ շատ զանազան ծառայութեամբ և պաշտօններով։

Իսկ օտար ազգաց թիւը տես ներքեւ. միայն պարսիկները թուով շատ են քան քրիստոնեայքը։

Բագուի բնակչաց մասին «Նոր Դար» լրագրի մէջ այսպէս է գրուած (1890. № 199 դեկտ. 14)՝

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ

Բագուից. — Մեր ոստիկանութեան վիճակագրութիւնից երեւում է, որ քաղաքումն ապրում են հետեւեալ ազգի, կրօնի, և սեռի բնակիչները։